Փորձարկումները

Հարեդը գիտեր, որ Հիսուս Քրիստոսն իր կողմից էր:

Նոել Լամբերթ Բարուս
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել Ֆրանսիայում:

Հարեդը գլորեց գնդակը դաշտի երկայնքով: Խաղացողները վազեցին նրա շուրջը, նրանց կոշիկները ճռռում էին հատակին:

«Ես կարող եմ ընդունել գնդակը»: Կանչեց Գաբրիելը:

Հարեդը փոխանցեց գնդակը Գաբրիելին և շարունակեց վազել: Հետո Գաբրիելը հետ փոխանցեց գնդակը: Հարեդը նետեց գնդակը դեպի օղակը:

ՇԸՐԸԽԿ:

Մտավ ներս:

«Գերազանց գործ էր»,- ասաց մարզիչը խաղից հետո: «Դու գիտես, փորձերը տարածաշրջանի հավաքականի համար երկու շաբաթից սկսվում են»:

Հարեդը քմծիծաղ տվեց: Միայն մի քանի խաղացողներ են հրավիրված այդ հավաքականի փորձերին:

«Փորձերը կլինեն կիրակի օրը»,- ասաց մարզիչը: Ի՞նչ ես կարծում, կարո՞ղ ես հասցնել»:

Հարեդի հուզմունքն անհետացավ նույնքան արագ, որքան եկել էր:

«Կիրակի օ՞րը»: Հարցրեց Հարեդը:

«Այո: Դա խնդիր է՞ առաջացնում»:

Հարեդը մտածեց այդ մասին: Սա նրա հնարավորությունն էր խաղալ իսկապես լավ թիմում: Բայց կիրակի օրերին նա գնում էր եկեղեցի և կենտրոնանում Փրկչի վրա:

«Բայց կիրակին հատուկ օր է ինձ համար»,- ասաց Հարեդը: «Բայց ես կխոսեմ ծնողներիս հետ այդ մասին»:

Այդ գիշեր Հարեդը նստած էր իր մահճակալին իր ծնողների հետ : Մինչ մտածում էր, նա վեր ու վար էր գցում բասկետբոլի գնդակը: «Ես իսկապես ուզում եմ փորձել այդ հավաքականի համար»,- ասաց նա մայրիկին ու հայրիկին: Բայց ես չեմ ցանկանում անել դա կիրակի օրը»: Ես գիտեմ Աստված ավելի կարևոր է, քան բասկետբոլը:

«Մենք ի՞նչ կարող ենք անել օգնելու համար»: հարցրեց մայրիկը:

Հարեդը շուռումուռ էր տալիս գնդակը իր ձեռքերում: «Կարո՞ղ ենք միասին աղոթել»:

Նա մի կողմ դրեց իր բասկետբոլի գնդակը և ծնկի իջավ մայրիկի և հայրիկի հետ: «Սիրելի Երկնային Հայր»,- ասաց նա,- «Ես իսկապես, *իսկապես* ցանկանում եմ փորձերի գնալ այս բասկետբոլի հավաքականի համար: Բայց փորձարկումները կիրակի օրն են: Ես գիտեմ կիրակին այն օրն է, որ ես տալիս եմ Քեզ: Ի՞նչ կարող եմ անել»:

Աղոթքից հետո Հարեդը հանգստացնող զգացում ունեցավ:

«Ինչպե՞ս ես», - հարցրեց մայրիկը:

Ես չեմ պատրաստվում գնալ փորձարկման, եթե այն կիրակի օրն է», - ասաց նա: «Բայց այնպիսի զգացում ունեմ, որ ամեն ինչ կարգին է լինելու»:

Երկու օր հետո Հարեդի մայրիկը է-փոստով մի նամակ ստացավ: Այն հաղորդում էր, որ փորձարկումներն այժմ տեղի կունենան շաբաթ օրը:

Հարեդը կարող էր փորձարկել *և* կիրակին սուրբ պահել: Նա գիտեր, որ Երկնային Հայրը լսել էր իր աղոթքը:

Հաջորդ երկու շաբաթվա ընթացքում Հարեդը որքան կարող էր շատ բասկետբոլ պարապեց: Երբ այդ մեծ օրը եկավ, Հարեդն արեց այն ամենը ինչ կարող էր: Նա արագ վազում էր խաղերի միջև, կատարում էր իր նետումների մեծ մասը և ծափահարում իր թիմակիցներին:

«Հետևյալ խաղացողները կշարունակեն փորձարկումները հավաքականի համար», - ասաց մարզիչը առաջին խաղակեսից հետո» «Խնդրում ենք ուշադիր եղեք, որպեսզի լսեք ձեր անունը»:

Հարեդի սիրտը բարձր բաբախեց: Մարզիչը հայտարարեց մեկ անուն: Ապա ևս մեկը: Եվ մեկ ուրիշը: Հարեդը զգաց, որ հավաքականում ընտրվելու իր հույսը սկսեց մարել:

Շուտով մարզիչն ավարտեց ցուցակը: Նա չհայտարարեց Հարեդի անունը: Հարեդը չանցավ փորձարկումների հաջորդ փուլը:

Նա նստեց մարզասրահի դրսի նստարանին և սևեռուն հայացքն ուղղեց իր կոշիկներին: Նա այնքան քրտնաջան էր աշխատել: Բայց թվում էր, թե նրա ամբողջ աշխատանքն իզուր էր անցել:

Երբ մայրիկը եկավ նրան վերցնելու, Հարեդն օրորեց գլուխը: «Ես չընտրվեցի հավաքականում»:

Մայրիկն ամուր գրկեց նրան: «Ցավում եմ, որ չեղավ այնպես, ինչպես մենք էինք ուզում», - ասաց նա:

Հարեդը խոր շունչ քաշեց: Հետո մի հանգստացնող միտք ծագեց նրա մոտ:

«Միշտ չէ, որ գործերը գնում են այնպես, ինչպես ես եմ կամենում», - ասաց նա: «Բայց Հիսուս Քրիստոսը ճշգրիտ գիտի, թե ես ինչ եմ զգում: Նա իմ կողքին է»:

Մայրիկը ժպտաց: «Դու իրավացի ես: Նա իսկապես գիտի, թե դու ինչ ես զգում»:

Հարեդն ի պատասխան ժպտաց: Նա դեռ տխուր էր, բայց ավելի լավ էր զգում՝ գիտենալով, որ Փրկիչը հասկանում էր, թե ինքը ինչ էր զգում: Հարեդը գիտեր, որ Հիսուսը միշտ կսիրի և կաջակցի իրեն: ●

ՆԱՄԲԵՐԸ՝ ԲՐԻԹՆԻ ՍՈՐԻՆ